ՍԱՂՄՈՍ 34

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ*

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
ՏԵՐԸ մատակարար և փրկիչ <u>MT Ներածություն</u> Դավթի Սաղմոսը, երբ Աբիմելեքի առջև խենթ ձևացավ	Աստծուն վստահողների ուրախությունը	Նեղությունից ազատվելու համար գոյություն (Ակրոստիկոս)	Աստծո բարության գովաբանություն	Աստծո արդարության գովաբանություն (Ակրոստիկոս)
34:1-3	34:1-3	34:1-3	34:1-3	34:1 (*Ալեֆ*)
				34:2 (*Բեթ*)
				34:3 (*Գիմել*)
34:4-7	34:4-7	34:4-10	34:4-7	34:4 (*Դալեթ*)
				34:5 (*Հի*)
				34:6 (*Զային*)
				34:7 (*Խեթ*)
34:8-14	34:8-10		34:8-10	34:8 (*Տեւո*)
				34:9 (*Յոդ*)
				34:10 (*Քաֆ*)
	34:11-14	34:11-14	34:11-14	34:11 (*Լամեդ*)
				34:12 (*Մեմ*)
				34:13 (*Նուն*)
				34:14 (*Սամեխ*)
34:15-18	34:15-16	34:15-18	34:15-18	34:15 (*Ային*)
				34:16 (*Ֆե*)
	34:17-18			34:17 (*Զադի*)
34:19-22	34:19-22	34:19-22		34:18 (*Քոֆ*)
			34:19-21	34:19 (*Րեշ*)
				34:20 (*Շին*)
				34:21-22 (*ԹավԱսո*)
			34:22	

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

ՀԱՄԱՏԵՔՍՏԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Սա ակրոստիկոս սաղմոս է: Յուրաքանչյուր համարը (բացի Սաղմ. 34:5-ից, որն ու ունի երկու եբրայերեն տառ) սկսվում է Եբրայական Այբուբենի հերթական տառով՝ 22 տառեր: Հետաքրքիր է, որ եթե ակրոստիկոս բանաստեղծությունը անցնում է 22 տառից, ապա հաջորդող տառերը լինում են պարբերաբար *Փե:*

Բ. Գոյություն ունի ակրոստիկոսի մի քանի ձև՝
1. Սաղմոս 9-10 (սակայն լիարժեք չէ, հինգ բաղաձայն բացակայում է և երկուսը տեղերով փոխված են)
2. Սաղմոս 25 (մի բաղաձայն է պակասում)
3. Սաղմոս 34 (յուրաքանչյուր երկրորդ տողի համար մի բաղաձայն /*վավ*-ը բացակայում է/)
4. Սաղմոս 37 (յուրաքանչյուր երկրորդ համարը սկսում է հաջորդող տառերով)
5. Սաղմոս 111 (յուրաքանչյուր տողի համար մի բաղաձայն, «Ալելույա» ներածությունն է, ոչ թե առաջին տողը)
6. Սաղմոս 112 (յուրաքանչյուր համարի համար երկու բաղաձայն)
7. Սաղմոս 119 (յուրաքանչյուր հաջորդ տառի համար ութ համար)
8. Սաղմոս 145 (ավարտուն չէ)

Գ. Նկատե՛ք, որ ՅԱՀՎԵՆ (այսինքն՝ ՏԵՐԸ) ներկա է գրեթե բոլոր համարներում: Սաղմոսը ՅԱՀՎԵԻ մասին է: Մարդիկ ճանաչում են Նրան՝
1. Նրա գործերով (տես՝ Նեեմիա 9)
2. Նրա խոստումներով (հատկապես՝ Ծննդոց 12, Ղևտացիների 26, 2 Օրինաց 27-30)
3. Նրա ուխտի միջոցով (Ծննդոցից- 2 Օրինաց)
4. Նրա Որդու միջոցով (Հովհաննես 1:1-14, Կող. 1:13-16, Եբր. 1:2-3)

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 34:1-3
[1]Բոլոր ժամանակներում ՏԻՐՈՋՆ եմ օրհնելու,
Նրա փառաբանությունը միշտ իմ բերանում է լինելու:
[2]Իմ անձը ՏԻՐՈՋՈՎ է պարծենալու:
Խոնարհները լսելու և ուրախանալու են:
[3]Ինձ հետ մեծարեցե՛ք ՏԻՐՈՋԸ,

Ու միասին բարձրացնենք Նրա անունը:

34:1-3 Սա վկայության պարբերություն է: Այն սկսում է ԵՁԱԿԻ ԸՂՁԱԿԱՆՈՎ և ավարտվում ՀՈԳՆԱԿԻՈՎ: ՅԱՀՎԵՆ չափազանց մեծ է և հրաշալի Իր բնավորությամբ և գործերով, որպեսզի Նրան չփառաբանենք:

1. Ես օրհնելու եմ ՅԱՀՎԵԻՆ – BDB 943, KB 1247, *Piel* ԸՂՁԱԿԱՆ, ԵՁԱԿԻ
2. Եկե՛ք մեծարենք Նրա անունը – BDB 926, KB 1202, *Polel* ԸՂՁԱԿԱՆ, ՀՈԳՆԱԿԻ

Նկատե՛ք թե ինչպես է փառաբանությունը նկարագրվում:

1. Բոլոր ժամանակներում. սա կարևոր հիշեցում է, որ ՅԱՀՎԵՆ պետք է փառաբանվի թե՛ լավ և թե՛ դժվար ժամանակներում. Նա չի փոխվում: Նրա ողորմությունը միշտ ներկա է: Միայն մեր մոտեցումն է փոխվում: Հավատքը պետք է շարունակի հաստատել Նրա ներկայությունը և փառաբանությունը, տեսէ 1 Թեսաղ.5:16-18:
2. միշտ (BDB 556, տես՝ Սաղմ.35:27, 40:16, 70:4, 71:6) իմ բերանում է լինելու. փառաբանությունը չպետք է կախում ունենա անձնական իրավիճակներից, այլ պետք է լինի շնորհքի ստացողների համար սովորական գործողություն:
3. Փառաբանություն պետք է բարձրանա բոլոր մարդկանցից (այսինքն՝ խոնարհ, բառացի՝ «նեղյալ», «աղքատ» կամ «տկար», BDB 776): Բոլոր մարդիկ էլ շատ բան ունեն Աստծուն փառաբանելու համար:
4. Միասին. փառաբանությունը թե՛ անհատական է և թե՛ հավաքական (այսինքն՝ միասին, BDB 403), ինչպես որ պաշտամունքը պետք է լինի: Մենք Նրա մոտ ենք բերում մեր անձնական կարիքները, ինչպես նաև մեր «միասնական կարիքները»: Միաբանությունն ու հաղորդակցությունը հավատարիմ հետևորդների միջև Աստծուն փառք է մատուցում և վկայություն ուրիշներին:

34:2 «պարծենալ» Եբրայերեն ԲԱՅԸ (BDB 237 II, KB 248, *Hithpael* ԱՆԿԱՏԱՐ), *Hithpael*-ով նշանակում է «պարծենալ», «մեծարել» կամ «գովաբանել» (տես՝ 3 Թագ.20:11, 1 Մնաց.16:10, Սաղմ. 64:10, 105:3, 106:5, 20:14, 25:14, 27:1, Եսայի 41:16, 45:25, Երեմ.9:23):

«Պարծենալու» աստվածաբանական հասկացության համար տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊԱՐԾԵՆԱԼ</u>

34:3 «Մեծարեցե՛ք ՏԻՐՈՋԸ» Այս ԲԱՅԸ (BDB 152, KB 178, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) հրաման է, ցույց տալու Աստծուն մեր սրտի գոհունակությունը փառաբանության միջոցով: Նախքան կենթարկվենք այս կյանքի թույլություններին կամ ներկայիս դժվարություններին, մենք պետք է ինքներս մեզ հիշեցնենք՝

1. ով է Աստված
2. ինչ է արել Նա
3. ինչ է անում Նա հիմա

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 34:4-7
[4]Փնտրեցի ՏԻՐՈՋԸ, ու ինձ լսեց
Եվ իմ բոլոր վախերից ինձ ազատեց:
[5]Նրան նայեցին ու լուսավորվեցին,
Եվ նրանց երեսները ամոթով չծածկվեցին:
[6]Այս խեղճ մարդն աղաղակեց, ու ՏԵՐԸ լսեց
Եվ նրան փրկեց իր բոլոր նեղություններից:
[7]ՏԻՐՈՋ հրեշտակը բանակ է դնում
Նրանից վախեցողների չորսբոլորը ու փրկում է նրանց:

34:4-7 Այս պարբերությունը զարգացնում է առաջին պարբերության մտքերը: Ուշադրություն դարձրե՛ք, թե ինչպես է այն ԵՋԱԿԻ թվից (այսինքն՝ «փնտրեցի ՏԻՐՈՋԸ») անցում կատարում ՀՈԳՆԱԿԻԻ (այսինքն՝ «նայեցին Նրան»), ճիշտ ինչպես առաջին պարբերության մեջ:

1. Սաղմոսերգուի համար՝ ՅԱՀՎԵՆ
   ա. պատասխանեց նրան – BDB 772, KB 851, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ
   բ. ազատեց նրան իր բոլոր վախերից – BDB 664, KB 717, *Hiphil* ՎԱՂԱԿԱՏԱՐ
2. Խմբի համար՝
   ա. ՅԱՀՎԵՆ լսեց, Սաղմ. 34:6
   բ. ՅԱՀՎԵՆ փրկեց նեղյալին
   գ. ՅԱՀՎԵԻ հրեշտակը շրջապատեց Նրանից վախեցողների շուրջբոլորը (տես՝ Զաք. 9:8, ՅԱՀՎԵՆ Ինքը Սաղմ. 125:2-ում)
   դ. ՅԱՀՎԵՆ փրկեց նրանց
3. LXX, Սիրիակ, Վուլգատտա տարբերակները ունեն «տես» և «լուսավորվիր» որպես ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ: MT Սաղմ. 34:5-ում տալիս է ՎԱՂԱԿԱՏԱՐՆԵՐ:

Հավատարիմ հետևորդները երբեք մենակ կամ մեկուսի չեն զգում: Նրանց հավատարիմ Աստվածը միշտ ներկա է և պատրաստ:

34:7 «ՏԻՐՈՋ հրեշտակը» Հրեշտակները փրկվածների ծառաներն են (տես՝ Թվոց 20:16, Սաղմ. 91:11, Ես. 63:9, Դան. 3:28, 6:22, Մատթ. 18:10, Գործք 12:11, Եբր. 1:14):

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՏԻՐՈՋ ՀՐԵՇՏԱԿԸ</u>

❖ **«Նրանից վախեցողները»** Սա *Qal* ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՑ է (BDB 431, KB 432), որը նկարագրում է հավատարիմ հետևորդներին (տես՝ Սաղմ. 15:4, 25:12,14, 31:19, 61:5, 66:16, 103:11, 118:4, 2 Օր. 28:58, Նեեմ. 1:11):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՎԱԽ (ՀԿ)
SPECIAL TOPIC: FEAR (OT)

I. Գրառումներ Ծննդոց 22:12-ից՝
   Այս տերմինը (BDB 431, KB 432) հաճախ է հանդիպում ՀԿ-ում երկու իմաստով: Այն կարող է նշանակել «վախ» (տես՝ Ծնն. 3:10, 18:15, 20:8, 28:17, 32:7, 42:35, 43:18), սակայն որոշակի համատեքստում այն փոխանցում է «երկյուղ», «հարգանք» կամ «պատիվ» իմաստը, երբ բնութագրում է մարդու վերաբերմունքը Աստծո նկատմամբ: Ուշադրություն դարձրեք հետևյալ տեքստերին՝ Ծնն. 42:18, Ելից 1:17, 9:30, 18:21, Ղևտ. 19:14, 32, 25:17, 36, 43, 2 Օրինաց 6:2,24, 10:12,20, 14:23, 17:19, 25:18, 28:58, 31:12-13, Սաղմ. 33:8: Այս «վախը» պետք է հանգեցնի երկրպագության և հնազանդության (տես՝ Ելից 20:20, 2 Օր. 6:13,24, տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊԱՀԵԼ</u>): Սա ապրելակերպ հանդիսացող փոխհարաբերություն է, այլ ոչ թե առանձնացված դեպքերի, վայրերի, կանոնների կամ օրենքների մի շարան: Հնազանդությունը բխում է սիրուց և հարգանքից, ոչ թե հատուցման վախից: Անհնազանդությունը հիմնականում սիրո դեմ է, ինչպես նաև օրենքի: Մարդու փոխհարաբերություն Աստծո հետ դառնում է կյանքի առաջնահերթություն: Այն, որ «Աբրահամը հավատաց Աստծուն» (Ծնն. 15:56) արտահայտվեց նրա կյանքում իր գործերի միջոցով Ծննդոց 22-ում:

II. Գրառումներ Երեմիա 1:8-ից՝
   ՅԱՀՎԵՆ «մի՛ վախեցիր» խոսքը հաճախ կրկնվող ուղերձ է Իր ծառաներին՝
   1. Աբրահամին՝ Ծնն. 15:1
   2. Իսահակին՝ Ծնն. 26:24

3. Մովսեսին՝ Թվոց 21:34, 2 Օրինաց 3:2,22
4. Հեսուին՝ Հեսու 1:5-9, 8:1, 10:8
5. Գեդեոնին՝ Դատ. 6:8-10
6. Սողոմոնին՝ 1 Մնաց. 28:20
7. Եսայուն՝ Ես. 8:12-15
8. Իսրայել ազգին՝ Ես. 41:10, 13, 14, 43:1,5, 44:2, 54:4
9. Դանիելին՝ Դան. 10:12,19
10. Մարիամին՝ Ղուկաս 1:30
11. Սիմոնին՝ Ղուկաս 5:16
12. Պողոսին՝ Գործք 27:24
13. Հովհաննեսին՝ Հայտն. 1:17

III. Գրառումներ Եսայի 41:10-ից՝
Սա շատ տարածված խոսք է ՅԱՀՎԵԻ կողմից Իր ժողովրդին (տես՝ Ես. 41:13, 14, 43:1,5, 44:2,8, 51:7, 12, 54:4,14): Ուշադրություն դարձրե՛ք, թե ինչու պետք է նրանք չվախենան:
1. ՅԱՀՎԵՆ անձամբ նրանց հետ է (այսինքն՝ Սաղմ. 23:4)
2. ՅԱՀՎԵՆ նրանց ուխտի Աստվածն է (այսինքն՝ Ծննդ. 15:1, Ելից 14:13, Դատ. 6:23, Ես. 41:10)
3. Նա նրանց զորացնելու է
4. Նա նրանց օգնելու է (Ես. 41:10, 14)
5. Նա նրանց բարձրացնելու է (Ես. 41:10,13)
6. բոլոր այն մարդիկ, ովքեր հակառակվում են նրանց՝
   ա. ամոթահար են լինելու
   բ. անպատիվ են լինելու
   գ. ոչնչանալու են (Ես. 41:11-12)
   դ. կորչելու են

IV. **Հեսու 4:14 «ՏԵՐԸ ամբողջ Իսրայելի առաջ Հեսուին բարձրացրեց»** Այս ԲԱՑԸ (BDB 152, KB 178, *Piel* ՎԱՂԱԿԱՏԱՐ կիրառվել է Հեսու 3:7-ում՝ մատնանշելով հենց այս գործընթացը):

NASB, JPSOA	**«ակնածեցին»**
LXX, NKJV, Peshitta	**«վախեցան»**
NRSV	**«երկյուղեցին»**
TEV	**«պատվեցին»**
NJB	**«հարգեցին»**
REB	**«մեծարեցին»**

«Վախի» (BDB431, KB 432) նշանակությունը տեսնելու համար սա Աստվածաշնչում լավագույն համարներից մեկն է: Այն գործածվում է «ակնածանքի» կամ «հարգանքի» իմաստով: Սա օգնում է մեզ հասկանալու, թե ինչ է նշանակում այն խոսքը, երբ կարդում ենք, որ պետք է «վախենանք» Աստծուց:

«Ինչպես որ Մովսեսից էին վախենում նրա կյանքի բոլոր օրերում» արտահայտությունը մի փոքր չափազանցություն է, երբ վերանայում ես Մովսեսի առաջնորդության դեմ նրանց տրտունջն ու ապստամբությունը Ելից և Թվոց գրքերում:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 34:8-14
[8]Օ՛, ճաշակեցե՛ք ու տեսե՛ք, որ ՏԵՐԸ բարի է:

Օրհնյալ է այն մարդը, որ Նրա վրա է դնում հույսը:
[9]ՏԻՐՈՋԻՑ վախեցե՛ք, ո՛վ Նրա սրբեր,
Քանի որ Նրանից վախեցողները ոչ մի պակասություն չեն ունենալու:
[10]Առյուծի կորյունները կարոտություն ու քաղց կկրեն,
Սակայն ՏԻՐՈՋԸ փնտրողներին ոչ մի բարիք չի պակասի:
[11]Եկե՛ք, որդի՛ք, լսեցե՛ք ինձ,
ՏԻՐՈՋ երկյուղն եմ սովորեցնելու ձեզ:
[12]Ո՞վ է այն մարդը, որ կյանք է ցանկանում
Ու սիրում է երկար օրեր ունենալը՝
Բարություն տեսնելու համար:
[13]Պահի՛ր քո լեզուն չարությունից
Ու շուրթերդ նենգություն խոսելուց:
[14]Հեռացի՛ր չարից ու բարությո՛ւն արա,
Խաղաղություն փնտրի՛ր ու նրա հետևից գնա:

34:8-14 Քանի որ ՅԱՀՎԵՆ «բարի» է (BDB 373 II), Նրա հավատարիմ հետևորդները (այսինքն՝ սրբերը, BDB 872) հորդորվում են՝

1. ճաշակեցե՛ք – BDB 380, KB 377, *Qal* ՀՐԱՄԱՑԱԿԱՆ, տես՝ Եբր. 6:5
2. տեսե՛ք – BDB 406, KB 1157, *Qal* ՀՐԱՄԱՑԱԿԱՆ (մեջբերված է Պետրոսի կողմից 1 Պետ. 2:3-ում LXX-ից)
3. հույս է դնում – BDB 340, KB 432, *Qal* ՀՐԱՄԱՑԱԿԱՆ /հայ.՝ ԱՆԿԱՏԱՐ/
4. վախեցե՛ք – BDB 431, KB 432, *Qal* ՀՐԱՄԱՑԱԿԱՆ
5. եկե՛ք (BDB 229, KB 246, *Qal* ՀՐԱՄԱՑԱԿԱՆ), լսեցե՛ք (BDB 1033, KB 1570, *Qal* ՀՐԱՄԱՑԱԿԱՆ) սաղմոսերգուին, որ սովորեցնում է ՅԱՀՎԵԻ վախը, Սաղմ. 34:11
6. նույնը ինչ #5-ում

Նրանց գործողությունների արդյունքները եղան՝

1. ոչ մի պակասություն չունեն, Սաղմ. 34:9բ, Սաղմ. 23:1
2. ոչ մի բարիք չի պակասի նրանց, Սաղմ. 34:10բ, Սաղմ. 84:11
3. երկար կյանք, Սաղմ. 34:12

Ահա սաղմոսերգուի ուսմունքը երկար ու երջանիկ կյանքի համար.

1. պահի՛ր քո լեզուն չարությունից ու շուրթերդ՝ նենգություն խոսելուց – BDB 665, KB 718, *Qal* ՀՐԱՄԱՑԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 12:3-4, 15:2-3, 73:8-9, Հակոբոս 3:5-12
2. հեռացի՛ր չարից – BDB 693, KB 747, *Qal* ՀՐԱՄԱՑԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 37:27, Ես. 1:16
3. բարություն արա – BDB 793, KB 889, *Qal* ՀՐԱՄԱՑԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 37:27, Ես. 1:17
4. խաղաղություն փնտրի՛ր – BDB 134, KB 152, *Piel* ՀՐԱՄԱՑԱԿԱՆ, տես՝ Մարկ. 9:50, Հռոմ. 14:19, 1 Կորնթ. 7:15, 2 Կորնթ. 13:11, 1 Թեսաղ. 5:13, Եբր. 12:14, Հակ. 3:17-18
5. խաղաղության ետևից գնա – BDB 922, KB 1191, *Qal* ՀՐԱՄԱՑԱԿԱՆ, տես՝ նույնը ինչ #4

Նկատեք, որ հավատարիմ հետևորդների համար ՅԱՀՎԵԻ արածների և նրանց իրենց իսկ համար արածների միջև բալանսը: Կան որոշումներ և հետևանքներ, թե՛ դրական և թե՛ բացասական (հաջորդ պարբերությունը մասամբ այդ ցանկն է ներկայացնում):

Պետրոսը մեջբերում է այս Սաղմոսը 1 Պետրոս 3-ում:

1. 1 Պետ. 3:10 – Սաղմ. 34:12,13
2. 1 Պետ. 3:11 – Սաղմ. 34:14
3. 1 Պետ. 3:12 – Սաղմ. 34:15-16

Նա դիտարկում է այն համապատասխանող միաբանության փոխհարաբերության շեշտադրությանը (այսինքն՝ «ներդաշնակ եղե՛ք, կարեկից, եղբայրասեր, ողորմած և քաղցրաբարո, չլինի թե չարությունը չարությամբ պատասխանեք, կամ նախատինքին՝ նախատինքով, այլ ընդհակառակը՝ օրհնեցե՛ք», 1 Պետ. 3:8-9):

34:8 «ՏԵՐԸ բարի է» «Բարի» (BDB 373 II) առանցքային բառ է այս պարբերության մեջ (տես՝ 1 Թեսաղ. 5:15):

1. ՅԱՀՎԵՆ բարի է (ԱԾԱԿԱՆ), Սաղմ. 34:8, տես՝ Սաղմ. 25:8, 86:5, 100:5, 106:1, 107:1, 118:1,29, 145:9, 1 Մնաց. 16:34, Եզրաս 3:11, Երեմ. 33:11, Նահ. 1:7
2. նրանք, ովքեր փնտրում են Նրան, որևէ բարիքի կարիք չեն ունենա (BDB 481 ԿԶՄՈՒԹՅԱՄԲ BDB 375), Սաղմ. 34:10, տես՝ Սաղմ. 84:11
3. ՅԱՀՎԵԻ վախը բերում է երկար, լավ (BDB 373) կյանք, Սաղմ. 34:12
4. հեռացի՛ր չարությունից և բարություն արա (BDB 373), Սաղմ. 34:12
5. ուշադրություն դարձրե՛ք «բարի» բառի կիրառությունը Հռոմեացիների 8:28-ում:

34:9

NASB, NKJV	**«սրբեր»**
NSV, NJB	**«սուրբ մարդիկ»**
TEV	**«մարդիկ»**
REB	**«սուրբ ժողովուրդ»**
JPSOA	**«սրբացվածներդ»**

Այս ԱԾԱԿԱՆԱԸ (BDB 872) կարող է նշանակել՝

1. Մեսիա՝ Սաղմ. 16:3 (ինչպես Դավթի մեծագույն սերմը՝ սերունդը)
2. հրեշտակները կամ երկնային խորհուրդը, Հոբ 5:1, 15:15, Սաղմ. 89:5-6,7, Դան. 8:13, Զաք. 14:5
3. հավատարիմ հետևորդները՝
   ա. քահանաները – Թվոց 16:5,7, Սաղմ. 106:16 (Ահարոն)
   բ. Ղևտացիները – 2 Մնաց. 35:3
   գ. մարգարեները – 4 Թագ. 4:9
   դ. ուխտավորները – Թվոց 6:5,8
   ե. Իսրայել – Ելից 19:6, Ղևտ. 11:44,45, 20:7, 26, 21:6, Թվոց 15:40, 2 Օր. 7:6, 14:2,21, 26:19, 28:9

Այստեղ վերաբերում է հավատարիմ հետևորդներին:

34:10

NASB, NKJV, NRSV, NJB	**«առյուծներ»**
LXX, Peshitta	**«ժայռ»**
REB	**«արքայազներ»**
NEB	**«անհավատները» (արաբերեն արմատից)**

MT տալիս է «առյուծներ»: Հարցն այն է, թե «ո՞ւմ է վերաբերում այս նկարագրությունը»: Կարծես թե լավագույն տարբերակն է հակադրել այս խոսքը Սաղմ. 34:2 և 6-ի «խոնարհների», «նեղյալների» կամ «աղքատների» հետ (BDB 776):

34:11 «որդի՛ք» Այս բառը «երեխաներ» (BDB 119) խոսքն է: Իմաստասիրական Գրականության մեջ ուսուցիչը կոչվում է «հայր», իսկ աշակերտները՝ «որդիներ» (այսինքն՝ Առակ. 1:8, 4:1, 10, 20, 6:1, 20, 24:13, 21):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 34:15-18

15ՏԻՐՈՋ աչքերն արդարների վրա *են*
Ու Նրա ականջները՝ նրանց աղաղակին:
16ՏԻՐՈՋ երեսը դեմ է չարագործներին՝
Նրանց հիշատակը՝ երկրից բնաջնջելու համար:
17*Արդարներն* աղաղակում են, ու ՏԵՐԸ լսում է
Ու իրենց բոլոր նեղություններից ազատում է նրանց:
18ՏԵՐԸ մոտ է նրանց, ում սիրտը կոտրված է,

Ու փրկում է հոգով խոնարհներին:

34:15-18 Այս պարբերությունը ցույց է տալիս աստվածահաճո կամ անաստված կյանքի հետևանքները՝

1. աստվածահաճոն՝
   ա. ՅԱՀՎԵԻ աչքերը (ներկայությունը և հոգածությունը) արդարի վրա են, Սաղմ. 34:15ա
   բ. ՅԱՀՎԵԻ ականջները՝ նրանց աղաղակը լսելու համար, Սաղմ. 34:15բ, 17
   գ. ՅԱՀՎԵՆ ազատում է նրանց իրենց բոլոր նեղություններից, Սաղմ. 34:17բ
   դ. ՅԱՀՎԵՆ մոտ է սրտով կոտրվածներին, Սաղմ. 34:18ա
   ե. ՅԱՀՎԵՆ փրկում է նրանց, ովքեր հոգով խոնարհված են, Սաղմ. 34:18բ, Ես. 57:15
2. անաստվածը՝
   ա. ՅԱՀՎԵԻ երեսը չարագործների դեմ է, Սաղմ. 34:16ա
   բ. նրանց հիշատակը կտրված է (BDB 503, KB 500, *Hiphil* ԱՆՈՐՈՇ ԿԱՉՄՈՒԹՅՈՒՆ), Սաղմ. 34:16բ. այս նկարագրությունը վերաբերում է մահվանը

Մի քանի մարդաբանական խոսքեր կան այս պարբերության մեջ, որոնք կիրառում են մարդու մարմինը նկարագրելու ՅԱՀՎԵԻՆ (տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾ ՆԿԱՐԱԳՐՎԱԾ ՈՐՊԵՍ ՄԱՐԴ</u>):

1. աչքեր
2. ականջներ
3. երես

34:18 «ՏԵՐԸ մոտ է» Ինչպիսի՜ հրաշալի խոստում (տես՝ 2 Օր. 4:7, Սաղմ. 119:151, 145:18): Ապշեցնող է, որ սուրբ Աստվածը ուզում է փոխհարաբերվել մեղավոր մարդկանց հետ: Նա փնտրում և հետամուտ է լինում մեզ: Մենք ստեղծված ենք Նրա կողմից Իր հետ փոխհարաբերվելու՝ հաղորդակցվելու համար (տես՝ Ծնն. 1:26, 27, 3:8): Անկախ այն հանգամանքից, թե ինչքան վատ են իրավիճակները (այսինքն՝ «կոտրված սիրտը», տես՝ Սաղմ. 147:3, Ես. 61:1 և «հոգով խոնարհածները», տես՝ Սաղմ. 51:17, Ես. 57:15), Տերը մոտ է հավատարիմ հետևորդներին:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 34:19-22
[19]Շատ են արդարի նեղությունները,
Բայց ՏԵՐՆ այդ ամենից փրկում է նրան:
[20]ՏԵՐԸ պահում է նրա բոլոր ոսկորները,
Դրանցից ոչ մեկը չի կոտրվելու:
[21]Չարությունը սպանելու է ամբարշտին,
Ու դատապարտվելու են արդարին ատողները:
[22]ՏԵՐԸ փրկում է իր ծառաների անձը
Եվ Իրեն հուսացողներից ոչ մեկը չի դատապարտվելու:

34:19-22 Այս պարբերությունը շարունակում է շեշտադրել նախորդ պարբերության վրա, սակայն աստվածահաճո և անաստված մարդկանց միջև տարբեր արդյունքների վրա շեշտադրությամբ: Վերջին երկու պարբերությունները երկրորդ աստիճանի զուգահեռականություն են:

1. ՅԱՀՎԵԻ գործողությունները Իր հավատարիմ հետևորդների հանդեպ՝
   ա. Նա ազատում է նրանց իրենց բոլոր շատ նեղություններից, Սաղմ. 34:19
   բ. Նա պահում է նրանց բոլոր ոսկորները առանց կոտրվելու (այսինքն՝ առողջության նկարագրություն), Սաղմ. 34:20
   գ. Նա փրկում է (տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓՐԿԱԳԻՆ, ՓՐԿԱԳՆԵԼ</u>)Իր ծառաներին, Սաղմ. 34:22ա
   դ. Իրեն հուսացողներից ոչ ոք չի դատապարտվելու, Սաղմ. 34:22բ

2. ՅԱՀՎԵԻ գործողությունները անհավատարիմների հանդեպ՝
   ա. Նա սպանելու է ամբարիշտներին, Սաղմ. 34:21ա (տես՝ Սաղմ. 34:16)
   բ. արդարին ատողները դատապարտվելու են, Սաղմ. 34:21բ

34:19 Այս համարի շուրջ կարելի է երկու կետ նշել՝

1. Արդարը այս մեղավոր աշխարհում չարչարվել է, չարչարվում է և չարչարվելու է (տես՝ Սաղմ. 37:39, 50:15, Դան. 12:1, Մատթ. 5:10-12, Հովհ. 15:18-21, 16:1-3, 17:14, Գործք 14:22, Հռոմ. 5:3-4, 8:17, 18-23, 2 Կորնթ. 4:16-18, 6:3-10, 11:23-30, Փիլ. 1:29, 1 Թեսաղ. 3:3, 2 Տիմ. 3:12, Հակ. 1:2-4, 1 Պետ. 4:12-16):
2. Աստված նրանց հետ է այս բոլոր նեղությունների մեջ և միջով անցնելիս: Երբեմն Նա ընտրում է հրաշքով ազատելը, սակայն հաճախ Նա այդպես չի անում (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ): Նրա ներկայությունը մեր ամենամեծ կարիքն ու խոստումն է: Նա գիտի, թե ինչի միջով ենք մենք անցնում (տես՝ Ելից 3:7):

34:20 Մարդու ոսկորների կոտրվելը Աստծո դատաստանի համար դարձվածք էր (տես՝ Սաղմ. 51:8, Ես. 38:13, Ողբ 3:4): Հետևաբար, ոչ մի ոսկոր կոտրված չլինելը դարձվածք էր այն բանի, որ կարիք չկա դատաստանի (այսինքն՝ արդար մարդ է):

Այս համարը մեջբերված է Հովհաննեսի Ավետարանում (տես՝ Հովհ. 19:36, Զաք. 12:10ի հետ միասին Հովհ. 19:37-ում) որպես մարգարեական կանխագիտություն: Կարծում եմ, որ այն ավելի լավ է հասկացվում որպես տիպաբանության գաղափար: Սաղմոս 34:20 Մեսիայի մահվան վերաբերյալ կանխասում չէ, այլ հավատարիմ հետևորդի համար առողջության և բարեկեցության խոստում:

Խնդիրը նրանում է, որ հերմենևտիկ տեսությունը պնդում է, որ բնագրի ներշնչված հեղինակի սկզբնական մտադրությունն է այն կետը, որից պետք է սկսել տեքստը, գրական ժանրը և պատմական համատեքստը հասկանալու համար: Անշուշտ դա ճիշտ է: Սակայն մենք պետք է իրավունք տանք ՆԿ-յան ներշնչված հեղինակներին կիրառելու տիպաբանություն: Մենք չենք կարող վերարտադրել նրանց մեթոդը, քանի որ մենք ներշնչված չենք, սակայն նրանք ներշնչված էին: Ուստի այս դեպքերում ՆԿ-յան կիրառությունը պետք է լինի վավեր, սակայն հաճախ կարող էր լինել զարմանալի անակնկալ ՀԿ-յան հեղինակի համար:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ո՞վ է «Տիրոջ հրեշտակը»: Սաղմոսներում ուրիշ որտե՞ղ է նա նշվում:
2. Ինչպե՞ս և ինչո՞ւ է ՆԿ-ում Սաղմ. 34:8-ը երկու անգամ մեջբերվում (Եբր. 6:5, 1 Պետ. 2:3):
3. Ինչո՞ւ է հեղինակը իրեն լսողներին անվանում «որդիք»:
4. Թվարկե՛ք մարդկային մարմնի մասերը, որոնք կիրառվում են նկարագրելու ՅԱՀՎԵԻՆ Սաղմ. 34:15-17-ում:
5. Ի՞նչ է նշանակում եբրայերենի «պահել բոլոր ոսկորները» դարձվածքը:
6. Որո՞նք են մեղավոր աշխարհում Սաղմ. 34:19-ի նկատառումները:
7. Ի՞նչ է նշանակում «շունչ» բառը ՀԿ-ում: